


Proceed  
presently off



1912

8127  
Printed in Turkey

19 Aug 2006

ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆԻ  
2011 - 08

# ԻՄՐԱՅԵԼ ՕՐԻ



(Մահման 200 ամեակի առիթով)

Կազմակերպություն

Թ. Ռ Ս Ա Ս

Հ - Հ

Արտադրություն  
Մերկ կենց թվ.  
Արագիս



Տպաքան  
Ա. Ապրիլսեան և ի. Օկուբ  
Աստրամիան  
1912

22 APR 2013

12-79

5

(47-925)

10

12-79

Printed in Turkey

## ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ




Նախ քան իսրայէլ օրիի պատմութեան անցնելը, ովտախ ասենք որ Օրին և նրա զործունէութիւնը սրանից մի երկու տամնեակ տարի առաջ մեր մէջ դեռ ևս ժամանակակից վառ հետաքըրքը բութիւն կարող էին զարթեցնել, որովհետեւ նման քաղաքական հայտցքները դեռ շարունակում էին թագաւորել:

Դեռ մի երկու տամնեակ տարի առաջ մենք փրկութեան միայն մի միամիտ ու միակողմանի ճանապարհ զիտէինք—օտարի օգնութեամբ հայրենիքի անկախութիւն ու ազատութիւն ձեռք բերել:

Շատ էլ նշանակութիւն չունեց մեր աչքում այն վճռողական համարակալիքը, որ վաղուց արդէն ցուց է այսին,

36579-62



անխառն հայրենիք չկայ, այլ գոյութիւն ունի զանազան ազգութիւններից, կրօններից ու լեզուներից կտղմած մի խառնուրդ, որ հրամայողաբար թելազրում է մեզ ընդունել մի հայրենիք, որ թագաւորէր մի համերաշխ կեանք, առանց կրօնի, լեզւի ու ազգութեան խարութեան, բալորովին նրան Զւցիրիականին:

Սակաւածէ, որ այժմ թէ մեր և թէ մեր զբացի ազգերի խնաելիքնեանների մի որոշ մաս արդէն ազգերի անխարութեան, համերաշխ կեանքի ու հայրենիքի զաղափար է զաւանում, մի հայրենիք, որ իւր բազմաւորութեան իդեալը բոլոր ազգերի տպագայ համերաշխ եղբայրակցութեան մէջ է փընտում:

Կրօնների, ազգութեան, հայրենիքի այս նորագոյն համամարդկային տեսակէաը միանդամայն տակնուվը բայ է անում մեր ամբողջ անցեալ պատմութեան գնահատման եղանակը, և ի միջի այլոց, իսրայէլ Օրիի պատմութիւնն ու գործունէութիւնն էլ նոր հայտքի անկիւնաշափով է զնում մեր տեսութեան առաջ:

Մի երկու տասնեակ տարի առաջ իսրայէլ Օրիի կամ նման գործունէութիւնը մեր մէջ ընդունակ էր հայրե-

նասիրական բուռն կայծեր ու հրդեհներ տուաջացնել, այժմ երկաւմզ ու ձիգ փորձերից յետոյ, այլ և պատմա—առցիական ձշմարտութիւնների նորհի գոյն հայեցողութեան թելազրանքներո հիման վրայ, մեր մէջ ծնեցնում է միայն կառկածոտ, թերահաւատ և նոյն իսկ դառն նեզնական վերաբերմունք:

✓ Վաղուց, շատ վաղուց հայերի մէջ ✓ բուն էր գրել, փոխանակ սեպհական ներքին ոյժի, օտարի օգնութեամբ հայրենիքի ազատութիւնը ու անկախութիւնը պահպանելու անպատւարեր, սխալ ու վահնգաւոր զաղափարը, բայց նորագոյն ժամանակները նոյնը նորից սկսում է իսրայէլ Օրին, որի գործունէութիւնը համեմատած հայերի վերջին դարերի քաղաքական ընդհանուր կատարեալ մեռելութեան հետ, անկախ իւր անզործնականութիւնից, հայի քաղաքական մտքի արթնացման սկիզբն կարելի է համարել և այժմ միայն այդ մտքով էլ կարելի է ընդունել նրան և զնահատել:

Հայը շատ զանազան ու բազմապիսի պատճառներով կորցրել էր իւր քաղաքական ազատութիւնն ու անկախութիւնը և ոչ մի իսրայէլ Օրի այլ ևս չեր կարող, այն էլ օտարի օգնութիւնով, նոր նորից ձեռք բերել այդ ան-

կախութիւնը:

Ամենայաջող գէպքում իսրայէլ Օրիները պիտի նպաստէին փոխարինելու մի պետութեան տիրապետութիւնը միւսով, որի գերազանցութիւնը նախընթացի վերաբերմամբ, սակայն ոչչով գեռ ապացուցւած չէր կարելի համարել.

Եւ այնուամենայնիւ, իսրայէլ Օրին իւր անձնաւորութեամբ ու գործունէութեամբ մեր նորագոյն ազգատիկ պատմութեան մէջ մի եզակի տեղ է բռնում և հրաւիրում է իւր վրայ հայ պատմաբանների և բանասէրների ամենամեծ ուշագրութիւնը:

Չնայելով այն բազմաթիւ նիւթերին ու վաւերագրերին, որ այնքան խնամքով հաւաքել ու կազմել է հանգուցեալ կարապետ Եզեանը, ոուսաց ու բաւարական արխիւներից, այնուամենայնիւ իսրայէլ Օրիի կեանքի ու գործունէութեան մէջ մնում են գեռ և բաւականաչափ չլուսաբանւած, մութը կէտեր:

Մեր այս յօդւածն էլ իսրայէլ Օրիի մասին կազմելիս օգտւել ենք, իհարկէ նոյն կարապետ Եզեանի „Сношенія Петра Великаго съ арямянскимъ народомъ“ մեծահատոր գրքից, նոյն-

պէս և Լէօիր «Հայկական տպագրութիւնից»:

Ներկայ յօդւածիս առիթ տւեց այն, որ Աստրախանում ցանկութիւնն է յայտնեւել այս տարի տօնելու Օրիի մահամբել է նա: Ցանկալի էր այդ տօնակատարութիւնը գարձնել համազգային:

1678 թւին, էջմիածնում, գաղտնի  
մի ժողով է կազմւում, ուր մասնակ-  
ցում էին 6 հոգևորյական և 6 էլ աշ-  
խարհական անձնաւորութիւններ. Հայ-  
ոց աշխարհի իշխանները — միլիոնները:  
Նրանք իրենց միջից ընտրում են  
երեք աշխարհական, երեք էլ հոգևո-  
րական, որ Յակոբ կաթոլիկոսի առաջ-  
նորդութեամբ գնան եւրոպա, զիմեն  
Պատին և Եւրոպական թագաւորներին  
ու խնդրեն նրանցից օգնութիւն. հայ  
ազգն ու աշխարհը պարսից լծեց ազա-  
տելու, ազատ ու անկախ Հայաստան  
կազմելու:

Ընտրւած աշխարհականների թւումն  
էր և Մելիք Իսրայէլը՝ Օրիի հայրը,  
պատմական Պոչենց տոհմից, բայց նա-  
արդէն ծեր էր և վախենալով պարսից  
հալածանքից, հրաժարւում է զնալ և

իւր փոխանակ ուղարկում է իւր որդի  
Իսրայէլ Օրիին:

Պատգամաւորութիւնը հանում է Կ.  
Պոլիս: Այսաեղ Յակոբ կաթոլիկոսը  
հիւանդանում է ու մեռնում և պատ-  
գամաւորութիւնը մնալով անառաջնորդ,  
վերադանում է Հայաստան, բացի  
Օրիից:

Օրին Կ. Պոլսից հայ վաճառական-  
ների հետ անցնում է Վենետիկ: Վե-  
նետիկում երեք ամիս մնալուց յետոյ,  
անցնում է Ֆրանսիա, ուր մնում է  
ամբողջ 12 տարի, կատարելապէս ու-  
ստամեսասիրում է այդ պետութեան կե-  
անքն ու լեզուն, յետոյ մանում է  
զինուորական ծառայութեան մէջ, հաս-  
նում է պարուչիկի և կապիտանի տա-  
տիճաններին և մասնակցում է պատե-  
րազմի: Պատերազմում գերի ընկնելով  
անզիստունների ծեռքը, ազատում է,  
բայց այլ ևս Ֆրանսիա չի վերադառ-  
նում, այլ անցնում է Գերմանիա և  
մանում է Մեծ իշխան Պֆալցի կուր-  
ֆիւրստ Յովհան-Վլինելմի մօտ ծառայ-  
ութեան Սյասեղ նրա ծառայութիւնը  
ակում է չորս տարի, և իրեն քաղաքա-  
կան կօմիսար, նա առիթ է ունենում  
ուսումնական կերպութիւնը  
ու լեզուն: Իրեն պետական պաշտօն-  
եայ, այսաեղ Օրին օղաւում է իր

մօտ ծանօթութիւնից կուրֆիւրստի  
հետ և մի յարմար ժամանակ դնում է  
նրա առաջ Հայաստանի ազատութեան  
գործը.

Պֆալցի կուրֆիւրստ Յովիան-Վիլհել-  
մը սպասածից աւելի մեծ համակրան-  
քով է վերաբերուուն Հայաստանի ազա-  
տութեան հարցին և բուռն ցանկու-  
թիւն է արտայայտում ամեն կերպ  
օդնել, մասնակցել այդ սուրբ գործին.  
խօսանում է նոյն իսկ հարկաւոր քա-  
նակութեամբ զինւորական ոյժեր ու-  
ղարկել Հայաստան, եթէ միայն Լեհա-  
կան և Ռուսական պետութիւնները  
դէմ չեն լինի իրենց երկրի միջով  
զինւորներ ուղարկելուն:

Ինչպէս երկում է, Խորայէլ Օրին  
եկեղեցիների միացման խոստումով  
չափազանց շահագրգուել էր կաթոլիկ  
հոգևորականութեանը Հայաստանի ա-  
զատութեան հարցով, ուստի այդ հո-  
գևորականութիւնը, յատուկ եղափա-  
կան կարգին պատկանողները, որոն-  
ցից մինը խոստովանահայր էր կուր-  
ֆիւրստի, միւսը Գերմանական կայսր  
Լէօպոլդի մօտ, մեծ թափով օգնում  
էին նրան իւր սկսած գործում:

Անշուշտ Եւրոպայի եղափաները կապ  
ունէին Հայաստանումն արդէն բուռ-

իրած եղափաների հետ, որոնք այդ մի-  
ջոցներում այնքան առաջ էին դնացել  
իրենց գործունեութեան մէջ, որ շատ  
անգամ լուրջ երկիւղ էին ազգում կամ  
իրենց ազգեցութեանն էին ենթարկում  
հայ կաթուղիկոսներին:

Խորայէլ Օրին կեանքի և գործունե-  
ութեան մէջ մեր յիշած մութ կէ-  
տերից ամենազլիստորը հենց եղափա-  
ների եղափառական դերը պիտի համա-  
րել:

Եթէ կուրֆիւրստի անկեղծ մարդա-  
սիրութեան մասին դժւար է կասկած  
յայտնել, ապա եղափաների „մարդա-  
սիրութեան“ մասին նոյնապէս դժւար է  
երկու կարծիքի լինել:

Սյդ սևահոգիները գեռ ոչինչ չարած  
Հայաստանի վրկութեան համար, շատ-  
պէլ էին Մեֆիստօֆելի նման, հայի  
հոգին գրաւ պահանջել: Դեռ ոչինչ չա-  
ռագին կրաւ պահանջել: Դեռ ոչինչ չա-  
ռագին կրաւ պահանջել: Օրի-  
րած, արդէն հայրենաէր Խորայէլ Օրի-  
ին իրենց կեղաստ ցանցերի մէջ էին  
քցել:

Ի՞նչպէս ասացինք, կուրֆիւրստը  
հաստատապէս վճռում է Հայաստանի  
ազատութեան գործը զլուխ բերել և  
այս մտքով նա համակներ է գրում  
էջմիածնի, Գանձասարի կաթուղիկոս-  
ներին, Հայոց աշխարհի իշխան մելիք-  
ներին, և Վրաստանի կառավարիչ Գէ-

օրգիին և յանձնելով Խորայէլ Օրիին նամակներ, ճանապարհ է դնում չայտաստան։ Այս նամակները գրւում են Գերմանիայի Դիւսելցորֆ քաղաքում 1698 թ. մայիսի 3-ին և մելքոների ձեռքն են համառմ հետեւալ 1699 թ. ապրիլի 13-ին։

Իւր նամակներում կուրֆիւրստը յուսադրում էր հայերին Պարսից լծից ազատւելու մասին, մեծ գովասանքով էր խօսում Օրիի վերաբերմամբ և խորհուրդ էր տալիս նրան կատարեալ հաւատ ընծայելու Խորայէլ Օրին էջմիածին հասաւ 1699 թ. ապրիլի 4-ին, ուր Եղիազար կաթուղիկոսի մահից յետոյ, խառնակութիւններ էին տիրում և հայրապետական աթոռը թափուր էր, ուստի Օրին այսաեղ իւր գաղտնիքը չբացանելով, անցաւ Գանձասար, ուր նստում էր տեղական Սիմէօն կաթուղիկոսը։

Օրիի առաջարկութիւնները լսելու համար Գանձասարում խորհուրդ կազմեց, ուր մասնակցում էին ինքը Սիմէօն կաթուղիկոսը և ինչդ արքեպիսկոպոսներ։ Այդ խորհրդում Օրին յայտնեց, որ ինքը եկել է Եւրոպական մի հզօր թագաւորի կողմից իրեկ պատգամաւոր։

Առայժմ չյայտնելով իւր գալու խ-

կական նպատակը և չյանձնելով բերած նամակները, Օրին ցանկանում էր նախապէս գիտել այդ հոգինորականների վերաբերմունքը ու բանելիք դիրքը։ Նա յայտնեց նրանց, որ նրան ուղարկող թագաւորը, կրօնական զգացմունքներից ազատ է ճնշւած գրիւած, ցանկանում է ճնշւած քրիստոնեաններին օգնութեան համեմ և ի նպատակ եկեղեցիների, վանքերի, հիւանդանոցների և նման հիմնարկութիւնների գրամական զոհաբերութիւններ անել, որքան որ հարկաւոր կլինի և այդ գումարների կանոնաւոր բաշխման վերահասու լինելու համար ցանկանում է ուղարկել իւր մարդիկը՝ հոգևորականներ, կոմիտարներ, ինժիներներ։

Յետոյ Օրին անցնում է կրօնական հարցին խորհուրդ է տալիս միութիւն հաստատել կաթողիկ եկեղեցու հետ։

Կաթողիկոսը նրան պատասխաննեց, որ նա մեծ շնորհակարութեամբ կընդունի վեհանձն ու մարդասէր թագավորնի գրամական զոհաբերութիւնները և նրանց կողոքարի ինչպէս որ հարկաւոր է, բայց այդ գրամը իրեն պիտի տալու է, բայց այդ գրամը իրեն պիտի ուղարկելի գաղտնապէս և որ բաշխման վերահսկողութեան համար մարդիկը ուղարկելը նա գտնում է բոլորովին աւելորդ, նոյն խոկ վահանգաւոր,

սրովինեակ այդ, զանագան կասկածների  
տեղիք կարող է տալ և նորանոր ճըն-  
շումների առիթ գառնալ:

Իսկ կաթոլիկ եկեղեցու հետ միու-  
թիւն հաստատելու և Պապի պիտաւորու-  
թիւնը ընդունելու հարցը, կրքերը բար-  
ձրացրեց և խիստ առարկութիւնների  
առիթ դառնալով, բոլորովին մերժւեց:

Գանձաստրում անյաջողութեան հան-  
դիպելով, իսրայէլ Օրին տեղական մե-  
լիքների խորհրդով Անդեղակոթ գիւղա-  
քաղաքն անցաւ, որ Մելիք Սաֆրազի  
կալւածքն էր: Այստեղ մելիքների ժո-  
ղովում կարգացւեց Կուրֆիւրստի նա-  
մակը՝ Օրին բացատրութիւններով ու  
լրացումներով: Այս ժողովում վճռւեց  
Կուրֆիւրստին պատասխան գրել:

Պատասխանի մէջ մելիքները նկա-  
րագրում էին իրենց ուրախութիւնը  
ու երախտազիտութիւնը Կուրֆիւրստի  
նամակի առիթով, գովաբանում էին  
Պոօշենց տոհմի անձնազոհոթիւնները  
և վերջն էլ աւելացնում:

„Աստծու ողորմութեամբ, մենք  
ոչ մի բանի պակասութիւն չունենք.  
մենք փող էլ ունենք, սասցւածք  
էլ, զէնք բանացնելու ընդունակ մար-  
դիկ էլ և ամեն ինչ, որ հարկաւոր  
է մեր գործի համար. մեզ պակա-  
սում է միմիայն կառավարիչը. մենք

սաստիկ ցանկանում ենք և աղօ-  
թում ենք Աստծուն, որ այդ վիճա-  
կը Զեղ ընկնէր: Եթէ Զէր պայծառա-  
փայլութիւնը մեզ օգնութիւն ու-  
ղարկեր իւր կարոս եղրօր հետ,  
մենք նրան կընդունէնք գրկաբաց և  
կհնագանդէինք նրան: Զեր դալու-  
ժամանակ ամեն բան պատրաստ կը-  
լինէր և մենք չէինք խնայի ոչ մեր  
ստացուածքը, ոչ մեր արիւնը, ոչ  
էլ մեր կեանքը Զեր պայծառափայ-  
լութեանը ծառայելու համար“:

Բացի այս նամակից, մելիքները նա-  
մակներ տւեցին նրան Պապի և Պետ-  
րոս Մեծի անունով և նրան օգնական  
նշանակեցին իրենց կողմից Խարբերդ-  
ցի Մինաս վարդապետ Տիգրանեանցին,  
որ այն ժամանակ Ղուրաբազի Սուրբ  
Յակոբ վանքի վանահայր էր:

Իսրայէլ Օրին Ղարաբաղում մնաց  
ընդամենը 12—15 օր. մի օր գիշերեց  
իրենց տանը իւր մօր և քրօջ մօտ, 2  
օր էլ իւր եղբայր Վարդանի տանը,  
բայց նրանց չայսոնեց իւր ով լինելը  
խիստ գաղտնապահութեան համար, իսկ  
մնացած բոլոր ժամանակը մելիքների  
հետ էր:

Պէտք է նկատել, որ Եւրոպա գրած  
նամակներում, մելիքները խօստանում  
են միանալ կաթոլիկութեան հետ, իրենց

հայրենիքի ազատութիւնը ձեռք բերելուց յետոյ, իսկ Պետրոս Մեծի նամակում կրօնի կամ կրօնափխութեան մասին ոչինչ չեն գրում և այդ բացատրում է նրանով, որ Եւրոպայից այդպիսի պահանջ էր գրւած, իսկ Պետրոս Մեծի կողմից այդպիսի պահանջ չէր ենթադրում, ուրեմն և հարկաւրութիւն էլ չէր զգացւում կրօնի մասին խօսելու։ Պետրոս Մեծի նամակում հայ մելիքները խնդրում են, որ նա նրանց օգնի Պարսից ծանր լժից ազատելու, խօստանում են, որ թէ իրենք մելիքները և թէ ամբողջ հայ ժողովուրդը մեծ հաւատարմութեամբ կծառային նրան.

Իսրայէլ Օրին մելիքների տւած նաւմակները հացնում է Կուրֆիւրստին և Պապին։ Կուրֆիւրստը իւր մտադրութեան-մէջ հաստատ էր, բայց որովհետեւ առանց գերմանական կայսրի գիտութեան և օգնութեան նա կը գժւարանար սկսել մի այնպիսի պատասխանատու և ծանր գործ, ինչպիսին էր հեռաւոր արշաւանքը դէպի Սրբելեան Հայաստան, ուստի նա մի նամակ է ուղարկում կայսրին, Օրիի միջոցով, որ նա էլ իր կողմից մասնակցի հայոց ազատութեան գործին։ Օրիին, ինչպէս առաջ էլ ասել ենք, թէ

Պապի և թէ կայսրի մօտ մեծ եռանդով օդնում էին եղւիաները։

Գերմանական կայսր Լէօպոլդը մեծ համակրանքով իւր պատրաստականութիւնն է յայտնում նպաստելու հայոց ազատութեան գործին, բայց իւր կողմից կարծիք է յայտնում, որ առանց Մոսկվի ցարի թույտութեան և օդնութեան այդ գործը ոչ կարելի է սկսել (Գերմանական զօրքերը Որուսաստանի վրայով պիտի անցնէին Հայաստան) ոչ էլ յաջող հետեւանքի հասցներ։

Համաձայն Լէօպոլդ կայսրի կարծիքի, Իսրայէլ Օրին ճանապարհ է ընթառում Որուսաստան Պետրոս Մեծի մօտ, առնելով իւր հետ նրան կայսրի և Կուրֆիւրստի նամակները։ Թէ Կուրֆիւրիստը և թէ կայսրը նամակներ են տալիս նաև հայ մելիքներին։

Օրիին յաջողվում է անցողական գիրսուանալ նաև Լեհաց թագաւորից և 1701 թ. յուլիսի 7-ին համում Մոսկվա։

\* \* \*

Եթէ Պետրոս Մեծը իւր համաձայնութիւնը աւար, Կուրֆիւրստը իւր գնդերը լեհաստանի և հարաւային Որուսաստանի վրայով պիտի արկելեան

Հայուսուսն ու

միւս կողմից Պորթուգալական նաւերով  
Պարսից ծոցի Բենգեր. Արաս հաւահան-  
դստից զօրքեր պիտի ուղարկէր Պարս-  
կաստանի մայրաքաղաք Սպահանի վրայ:  
Այդ միենոյն ժամանակ Հայոց մելիք-  
ները ծածուկ զինուրական պատրաս-  
տութիւններ պիտի տեսնէին և Եւրո-  
պական զօրքերի հետ պիտի միանա-  
յին, առաջնորդելով նրանց դէպի երկրի  
տիրապետութիւնը:

Ո՞վ գիտէ գուցէ Արևելքը, նոր,  
իւրատեսակ խաչակրաց արշաւանքի  
ականատես լինէր, եթէ միայն մի ու-  
րիշ, Եւրոպայի համար աւելի կարևոր  
հարց չգար տակնու վրայ անելու այդ  
աշխարհի ամբողջ արևմուտքը — այդ  
իսպանական թագի ժառանգութեան  
հարցն էր, որ անեղ պատերազմների  
առիթ գառնալով, ամբողջովին կլանեց  
թէ Հայոց բարեկամ կուրֆիւրստի և  
թէ Գերմանական կայսրի զինուրական  
ոյժերը ու, ի՞նարկէ, հայոց ազատու-  
թեան հարցը այդ կողմից դարձաւ բո-  
լորովին անյուսալի:

Միւս կողմից Պետրոս Մեծը մեծ  
քիլով ընդունովմ է Իսրայէլ Օրին,  
լոնդոն ու Լոնդոնովմ է նրա ասածներն  
ու ընդունում է նրա առաջարկութիւ-  
ններից մասնաւուդ որ ինքն էլ մտա-  
դիր էր շուտ թէ ուշ, թէ աշխարհա-

կալական և թէ վաճառականական մի-  
տումներով գրաւել ու վերջնականապէս  
հաստատւել Կասպից ծովի արևմտեան  
ու հարաւային ափերում «անտէր, ան-  
տիրական ծովին» տէր կանգնել:

Բայց այստեղ էլ աննպաստ հանգա-  
մանքներ կային — Պետրոս Մեծը զբաղ-  
ւածէր Շէգական պատերազմներով,  
ուստի նա սախալւծ էր միայն ազա-  
գայի մասին յայսեր տալ Օրին:

Իսրայէլ Օրիի ծրագիրը աւելի հա-  
մեսս էր ու սահմանափակ — Պարսից  
քրիստոնեանների հայերի և վրացին-  
ների ազատութիւնը, բայց Պետրոս  
Մեծինը շատ ընդարձակ էր — նա զըր-  
կում էր ամբողջ մերձաւոր արևելքը:

Պետրոս Մեծին դիմում էին ոչ մի-  
այն հայերն ու վրացիները այլ և թուր-  
քաց լծի տակ տառապող քրիստոնեա-  
ները — յայները ու Բալկանեան պավ-  
եանները:

Պետրոս Մեծն էլ Իսրայէլ Օրիի  
նման շատ լաւ գիտէր, որ ժամանա-  
կակից Պարսկաստանին բաժեկու հա-  
մար շատ մեծ զինաբազու պահանջուած  
պահանջվում, բայց այն էլ աւագ գիտէր  
որ Պարսկաստանի հետ կուղը թիւ ի-  
վերջոյ գործ պիտի ու կամաց զաման-  
եան պետութեան հետ, որ դժու գործ

երկիւղ ազգելու չափ գրական ոյժ ունէր իր մէջ:

Հարցուվորձի ժամանակ հսրայէլ Օրին յայտնեց, որ Արևելեան հայերը (զիմաւորապէս Ղարաբաղի և Ղափանի) կարող կլինեն մօտ 116 հազար զինուրդներ հանել: Այստեղ մի քիչ չափազանցութիւն կայ իհարկէ. գործի յաջողութեան համար Օրին մի քիչ թւերը աւելացնում էր, բայց եթէ աչքի առաջ ունենանք, որ ժողովրդական պատերազմներում մասնակցում են երկրի բոլոր չափահաս ոյժերը, ասլա այդ թիւը կարող էր համապատասխան լինել իրականութեան: Վրացիները կարող էին տալ 30—40 հազար զինուրդներ, ուրեմն Պարսկաստանի քրիստոնեաները կարողանային մի ահազին բազմութիւն, մօտ 150 հազար կուող զինուրդներ տալ, իսկ պարսիկները պատերազմի դաշտ կարող էին ուզարկել, ամենայաջող գէպքում, այն էլ մի քանի ամիսներից յետոյ միայն, մօտ 38 հազար մարդ.

Հայաստանում այդ ժամանակ, Օրիի ասելով, միայն հինգ հատ պարսիկ նահանգապետներ կային իրենց մի քանի հարիւր պահապան զօրքերով և եթէ առաջուց յայտնի լինէր թէ թագաւորը երբ է գալու իւր զօրքերով, հայերը

նախապէս կաշխատեին զըաւել Սըաքս գետի բոլոր անցքերը և այն ժամանակների, վրացիների, և հայերի մարտիկները, զըէթէ առանց զոհ տարութիւնները, զուրովին կըշէին պարսիկներին բոլորովին կըշէին պավանդակ երկրին:

Իսրայէլ Օրին Օսմանեան պետութեան վերաբերմամբ էլ շատ օպտիմիստ էր: Նրա կարծիքով, եթէ Օսմանցիները համարձակւէին խառնուել պատերազմին, առաջ թագաւորը շատ մեծ գժւարութիւն չէր ունենայ Հայութաւոլիստի վրայով, շատ կարճ ժամանակում, յաղթական կերպով կ. Պոլիս մտնել: Նա հաւատացնում էր, որ տեղական ժողովրդի մեծ մասը հայեր և յոյներ լինելով, զրկաբաց կընդունէին ուռւներին իրեկ իրենց ազատարարների և ամեն կերպ կօգնէին նրանց:

Սակայն, ինչպէս ասացինք, Պետրոս Մեծը զբաղւած լինելով Շէգական պատերազմներով, հսարաւորութիւն չունէր պարսկական արշաւանքը սկսելու:

Իսրայէլ Օրին անդադար աշխատելով Մոսկվայում, միենոյն ժամանակ իւր յարաբերութիւնները շարունակում էր Գերմանիայի և Հայաստանի հետ: Նա

իւր աշխատութիւնների հետևանքների մասին տեղեկութիւններ է հազորդում կուրֆուրփիստին, Նազար Օրեխօվիչ հայի միջնորդութեամբ, իսկ հայոց կաթուղիկոսներին ու մելքներին Միլոն Վասիլիչի միջնոցաւ, որ Պետրոս Մեծի մօտ ծառայութիւնը վերջացրած մի մօսկովարնակ դիմուրական հայ էր:

Իսրայէլ Օրիի դրութիւնը չափազանց ծանր էր: Նա բաց աչքով տեսնում էր, որ թանգարին ժամանակը անցնում է իզուր, որ նրա բոլոր աշխատութիւնները թէ Եւրոպայում և Ռուսաստանում անցնում են բոլորովին անհետևանք:

Ո՞վ կարող էր Երաշխաւորել, որ Պարսկաստանի անձար ու թոյլ դրութիւնը գեռ Երկար կշարունակւէր, ինչպէս շահ Հուսէյինի ժամանակն էր, մինչև որ Եւրոպան կամ Ռուսաստանը յարմար ժամանակ գտնէին իրենց ուշագրութիւնը հայերի վրայ դարձնելու: Արդեօք մի օր շահ Հուսէյինին չի վիշտարինի մի աւելի խելացի, մի աւելի քաջ շահ, և անհնարին չի դարձնի Երկրի ապատութեան գործը:

Օրիին տանջում էր նոյնպէս պարապութիւնը: Նրա գործունեայ հոգին կենդանի գործ էր պահանջում: Նա

խնդրում էր թագաւորից, որ իրեն թոյլ տան ֆրանսիական կարաքիներների օրինակով մի գունդ կազմել և մասնակցել պատերազմներում նրա թշնամիների դէմ:

Երբ Օրեխօվիչը և Վասիլիկը վերադան իրենց ճանապարհորդութիւնից, նա խնդրեց թագաւորին, որ իրեն թոյլ արտի արատատհման գնալու իւր ընտանիքի հետ տեսակցելու համար (Գերմանական Դիւսելդօրֆ քաղաքումն էին նրա կինը և երկու որդինքը) և միենայն ժամանակ վերջնականապէս իմանալու, թէ ի՞նչ ձեռվ ու չափով կցանկանային կայսրն ու Կուրֆիւրստը մասնակցել հայոց ապատութեան գործին:

Բացի դրանից Օրին խնդրում էր թագաւորից, որ իրեն զնդապետի աստիճան շնորհի, որ նա հեղինակութիւն ձեռք բերելով, աւելի հեշտութեամբ հարսողանար ապագայ պատերազմի համար հարկաւոր օֆիցերներ, ինժիներներ, զինագործներ, արհեստաւորներ և այլն ձեռք բերել Եւրոպայում: Իսկ Եթէ մինչև իւր վերադարձը գեռ Շւէդական պատերազմը շարունակւէր, այն ժամանակ Օրին մտագիր էր Պապի, Գերմանական կայսրի և Կուրֆիւրստի

կողմից արտակարգ դեսպանութեան թղթեր ձեռք բերելով, Պարսկաստան անցնել, երկիրն ու հանգամանքները տեղնուտեղը զործնականապէս ուսումնասիրելու, Հայոց մելքների հետ խորհրդակցելու և թէ իւր հետի մարդկանց երկրի ու նրա դիրքերի, ճանապարհների հետ ծանօթացնելու համար, Նա մտադիր էր նոյնապէս, կամաց կամց, մարդիկ և ձիեր ուղարկել Աստրախան, որ այնտեղ իւր հաշւով մի տուննձին հայկական, հաղար մարդուց բաղկացած, ձիաւոր զունդ կազմի ապագայ պատերազմներին մասնակցելու համար և ընարել ու ձեռքի տակ ունենալ հարկաւոր քանակութեամբ, երկիրը, նրա ճանապարհներն ու անցքերը ճանաչող և տեղական լեզուներին ծանօթ մարդիկ:

Պետրոս Մեծը հաւանութիւն է տալիս Իսրայէլ Օրիի ծրագրներին, նւիրում է նրան գնապետի աստիճան, նամակներ է զրում գերմանական կայսրին, և կուրֆիւրստին և յանձնելով նրան արձակում է Եւրոպայ 1704 փետրւար 10-ին:

\* \*

Իսրայէլ Օրին յաջողեցնումէ Եւրոպայում հայոց բարեկամ կուրֆիւրստի

և եզրիաների օգնութեամբ Պարպից, Յովսէփ Լ գերմանական կայսրից (Լէօպոլդի յաջորդը) և իրենից կուրֆիւրստից նամակներ վերցնել Պարսից շահին յանձնելու և նշանակել նրանց կողմից արտակարգ դեսպան Շահի մօտ:

Այդ նամակներում Պարպը և յիշեալ վեհապետները խնդրում էին Շահին, որ իրեն հպատակ քրիստոնեաների հետ մարդասիրաբար վարւի և Իսրայէլ Օրիին ընդունի իրենց կողմից իրեն արտակարգ դեսպան:

Եւրոպայում իւր բոլոր պատրաստութիւնները տեսնելուց յետոյ Իսրայէլ Օրին վերադառնում է Մոսկա: Եւրոպայում և յատուկ Ամստերդամ քաղաքում, ուր այն ժամանակ գլխաւորապէս կենդրուացած էին հայ վաճառականները, Իսրայէլ Օրին, ըստ երկոյթին, գրամական օժանդակութիւն էր ստանում իւր գործի համար և բարյապէս խրախուսվում: Ի միջի այլոց նա գնել էր 15—20 հազար բուրլուզէնքեր, համասկեսաներ, և այլ զինւորական պարագաներ իւր ծրագրած գունդը կազմելու համար և իւր հետ վեցըրել էր նոյնապէս 50 հոգի զինւորութեան արհեստին ծանօթ ամեն տեսակ, զանազան ազգերից մարդիկ, իւր նպատակների համար:

Նախ քան Պարսկաստան անցնելը, իսրայէլ Օրին բարեփօսում է Պետրոս Մեծի առաջ, որ նա Մոսկվայում ապրող վրացական արքայազն Արչիլին Վրաստան արձակի և Պարսից շահից մի թղթով պահանջի, որ նա Արչիլին վնրադարձնի իւր արքայական իրաւունքները, նա այս բանը անհրաժեշտ էր համարում, որ վրացիներն էլ հստաբաւորութիւն ունենան հարկաւոր պարաստութիւնները տեսնել, տպագայ պատերազմների համար:

Գետրոս Մեծը մեծ յօժարութեամբ ու պատրաստականութեամբ տալիս է Օրին բոլոր նրա ցանկացած թղթերը և նշանակում է իւր կողմից էլ արտակարգ գեսպան Պարսկաստան գնալու համար և մի տուանձին թագաւորական հրովարտակով հրամայում է, որ նրան տան Մոսկվայից մինչև Նիժնի և Աստրախան, Աստրախանից էլ մինչև Նիզովի նաւահանդիսար պետական նաւեր և հարկաւոր մարդիկ, որ նա առանց նեղութեան Պարսկաստան անցնի:

Եւ այդպիսով Իսրայէլ Օրին անցնումէ Պարսկաստան (1707-ին) Պալի, Գերմանական կայսրի, Պֆալցի կուրֆիւրստի և որ ամենից պլխաւորնէ, Ռուսաց թագաւոր Պետրոս Մեծի թրդ-

թերով և նըանց կողմից իբրև արտակարգ գեսպան:

Իսկապէս զարմանալի անսպառ է Իսրայէլ Օրին եսանգը, ընդարձակ է նրա քաղաքական տեսութեան հորիզոնը և ժամանակակից իբրեի և զբութիւնների հասկացողութիւնը, նոյնպէս անձնազոնութիւնն ու անշահասիրութիւնը: Թէ սոված թէ սեպհական ընտանիքը, թէ անձնական զործերը, իբրև ազատութեան մի անձնազոն առաքեալ, տասնեակ տարիներով, աստանգական դեգերում է օտար երկրներում, ամբողջ Եւրոպան, Ռուսաստանը, Թիւրքիան և Պարսկաստանը ունատակ տալով, անդադար ու անխոնջ աշխատում է, ամեն տեսակ կոմբինացիաներ է կազմում, որ իւր ազգի փրկութեան գործը առաջցնի, մի տեսակ գլուխ բերի:

Պարզ բան է, որ բոլոր այս երթեւկութիւնների ու ահազին պատրաստութիւնների համեմատ և մեծամեծ ծախսեր կպահանջւէին, բայց նա հրաժարւելով հայ մելիքների կողմից առաջարկած դրամական օժանդակութիւնից, իւր Դիւսելզօրֆում ունեցած աները ծախսեց, հարկաւոր ծախսերը կատարելու համար:

Բայց, ափանս, որ թէ արտաքին հանգամանքները և թէ մեր ներքին աղ-

գային գործերը բոլորովին աննպաստէին, միշտ հակառակ էին դասաւորում և հայրենասէր Օրիի բոլոր աշխատանքները ի գերե հանում:

\* \*

Իսրայէլ Օրիի բազմամարդ գեսպանութեան հանդիսաւոր մուտքը Պարսկաստան չափազանց մեծ ազգեցութիւն գործեց:

Շամախու պարսիկ Խանը, (Շամախին այն ժամանակ կովկասի ամենաբազմամարդ, ամենահարուսա քաղաքն էր իւր ծաղկած առեւրական արդիւնակործութեամբ) լուր ուզարկեց Շահ Հուսէյնին, որ այնտեղ է ժամանել Մոսկովի Յարի գեսպանը, որ միհնոյն ժամանակ նամակներ ունի նաև Պապից և Թերմանական կայսրից և թէ նա իւր ճետ շատ աւելի մեծ շքախումբ է բերել, քան թէ առհասարակ ընդունած է այդպիսի դէպքերում:

Դրա ճետ իմիսասին լուր տարածւեց, որ գեսպանը պարսկաստանցի հայ է, որ նա հայոց հին թագաւորների սերունդ է, որ նա միաք ունի Պարսկաստանից քշել տալ բոլոր միսիօնարներին և այլն:

Այս լուրերը մեծ շփոթութեան մէջ ձգեցին Շահ Հուսէյնին և նրա մերձա-

ւորներին: Սպահանում նստած Լիւդովիկոս ԱՎ-ի ֆրանսիացի գեսպանն էլ միւս կողմից էր կրակի վրայ իւղ ածում (ֆրանսիան և Թերմանիան պատերազմում էին իսկ Օրին գեսպան էր համարում և Փերմանական կայսրի կողմից): Նա ամէն կերպ աշխատում էր սեւցնել Օրիին Շահ Հուսէյնի առաջ: Նա հաւատացնում էր, որ Իսրայէլ Օրին Պարսկաստանի համար մի շատ վտանգաւոր մարդ է, որ նրա թէ Պապից և թէ Եւրոպական վեհապետներից բերած նամակներն ու թղթերը կեղծ են և որ ամենից զլիաւորն է, իսրայէլ Օրին աշխատում է Ռուսաստանի և Եւրոպական այլ պետութիւնների օգնութեամբ վերականգնել Հայոց թագաւորութիւնը և ինքն էլ թագաւոր դառնալ: Դրան իրեն ապացոյց ըերում էր և այն, որ եթէ նրա Israel Ori անւան տառերը տեղափոխենք il sera roī Փրանսէրէն խօսքերը կըստանանք, որ նշանակում է—նա թագաւոր կլինի:

Իսրայէլ Օրիի վտանգաւորութեան և նրա միջոցով ուուս կառավարութեան քաղաքական ինստրիգների վրայ մատնացոյց էր անում և Սւեդանական իշխան Միլ-Վեյսը:

Դրանք, և դրանց նման մի կարդ մար-

դիկ աշխատում էին և խորհուրդ տալիս Շահին, որ Խորայէլ Օքիին չընդունի իրու գետան, այլ՝ ընդհակառակը, հրամայի, որ իւր երկրի սահմաններից ճեռացնեն նրան:

Բայց Շահ հուսէլինը, որքան էլ կառկածէր, ստիպւած էր Խորայէլ Օքիին ընդունել բոլոր իւր գետանական պատիւներով, հակառակ գէպը ում նա անպատւած կլինէր մի այնպիսի հզօր թաղաւորի, ինչպիսին էր Պետրոս Սեծը:

Բայց Խորայէլ Օքիի Սպահան գնաւը, ըստ երեսյթին, մի ձեւական բան էր, նա այնտեղ կատարելիք շատ գործ չէր կարող ունենալ. ուստի նա այնտեղ մնում է միայն մի երկու ամիս, իսկ մնացած բոլոր ժամանակից անց է կացնում Շամախում, հայկական կեանքի մի կենարօնում, բոլորովին մօտիկ Հայոց մելիքներին և Գանձասարի կաթուլիկաներին:

Մօտ երեք տարի մնալով Շամախում, Խորայէլ Օքին, ենթազրելի է, որ ինչ որ բանակցութիւններ ու նախնական պատրաստութիւններ ուներ կատարելու մելիքների և հայոց հոգեուրականութեան հետ, վիովին կատարեց:

Թէ ինչ զիբք ու զօրութիւն ունէր

Խորայէլ Օքին Շամախում, այդ ցոյց է տալիս այն հանգամանքը, որ մի խռովութեան ժամանակ այդ քաղաքում, երբ նա ստիպւած էր իր մարդում, դիկ պինել, հրամայեց լցրած, դիկսերին զինել, հրամայեց լցրած, կազմ ու պատրաստ պահեն և 12 թնդանօթներ...

Վերջացնելով իւր միսսիան Պալմաստանում, Խորայէլ Օքին, 17 10 թւին սկսեց պատրաստութիւններ տեսնել Ռուսաստան անցնելու: Վերադառնալու համար նա ուստ կառավարութիւնից ինպրեց չորս հատ նաւ, որովհետեւ նա, Պետրոս Մեծի պատւէրի համաձայն Պետրոսի կամուցից, պիտի իր հետ բացի իւր մարդկանցից, պիտի իր հետ բերդնէր և 60 հայեր, հմուտ մետաքս սազործութեան արհեստին, նոյնպէս մետաքսութեան արհեստին, հոյնպէս Մուկվայում:

Բայց գրանից նա գնել էր 31 ընտիր զարաբաղի և արաբական ձիեր, պարսկական մըգեղէն, արևելեան զապական ապրանքներ ու տեղական զանազան ընտիր տեսակի զինիներ թանազան կաւորին և նրա մեծամեծներին ընծայգաւորին և համար: Բայց կառավարութիւնը, ելու համար: Բայց կառավարութիւնը, համար վախանակ չորսի, հնարաւոր զատ վաղարկել նըան միայն երկու նաւ, ուստի կաթուլիկ նըան միայն երկու նաւ, ուստի կաթուլիկ նըան միայն երկու նաւ, ուստի կաթուլիկ նըան միայն երկու նաւ,

✓ տի Իսրայէլ Օրին ստիպւեց ձիերը ցամաքային ճանապարհով Աստրախան ուղղարկել և փոխանակ 60 մարդու միտին 12 հոգի մետաքսագործներ վերցնել իր հետ։ Սակայն նաւերից միայն մինը, որ մէջ լոեցաւորւած էին ապրանքների մեծ մասը և նրա հետ եղած մարդիկ, յաջողութեամբ Աստրախան հասաւ, իսկ միւսը, որի մէջ ի միջի այլոց և ինքն Օրին էր, սասարիկ քամուց և ալեկութեամբ յետ յետ մղւեց գէպի Կովկասնան ափերը, ջարդւեց, ապրանքների մեծ մասը փչացաւ, և ինքն էլ Իսրայէլ Օրին, հազիւ հազ ապատած, ստիպւած էր նորից նիզովի նաւահանգիստը վերադառնալ և այնտեղ ձմեռել։

Այս անյաջող ճանապարհորդութիւնը օրհասական նշանակութիւն ունեցաւ Իսրայէլ Օրիի և նրա գործի ընթացքի վրայ։ Աստրախանում, տեղական վօյեցողան, կազանի գուրերնատոր Ապրակսինի գիտութեամբ, զրաւեց նրա բուլոր ապրանքները և ձիերը որպէս կօնտրաբանդ, մաքսը չփառւած արտասահմանեան ապրանք։ Բացի սրանից նրա շքախմբի մարդիկը Աստրախանում մնալով առանց կանոնաւոր ոօճկի և ապրուստի միջոցների, սկսեցին

արանջալ և անբաւականութիւններ յայտնել։

Հետեւեալ 1711 թ. ամառը Իսրայէլ Օրին շտապեց Աստրախան իւր գործերը կարգի բերելու, բայց այնտեղ անակնկատ կերպով հիւանդացաւ ու մեռաւ (Մինաս վարդապետի ասելով թունաւորւեց)։

Իսրայէլ Օրիի հետ Աստրախան էր եկել Գանձասարի հայոց կաթուղիկոս եսային, իւր երկու եպիսկոպոսների հետ, որ մտադիր էր անձամբ Մոսկվա վագաւորի մօտ Հայոց գործի մասին խնդրելու, բայց Իսրայէլ Օրիի մահը և տեղական իշխանութիւնների անհիւրնկալ վերաբերմունքը ստիպում են նրան, իւր սիրելի Օրիին թաղելուց յետոյ, կոտրւած սրտով վերագառնալ իւր Գանձասարի վանքը։

Իսրայէլ Օրիի հետ, իսկապէս ասած, թաղւում է և նրա սկսած, նրա կեսմաքի միակ նպատակ դարձած, Հայաստանի աղատութեան գործը։

\*\*\*

Որքան էլ մի ազգի պատմութեան ընթացքը կախւած է զանազան ներքին և արտաքին, աշխարհագրական, անտեսական, սօցիալական, կրօնական, ազգային և այլն բարդ պատճառ-

ներից, բայց արտաքոյ կարդի ընդունակ, տաղանդաւոր, երկաթէ կամքի տէր առանձին անհատներն էլ, իրենց կարգին, ահազին, վճռողական նշանակութիւն են ունենում պատմութեան այս կամ այն ընթացքի վրայ:

Տւէք իւր ժամանակին հայ աղզին մի երկու իրար յաջորդող, ուժեղ կամքի տէր, թէկուզ բռնակալ, ինքնակալներ, որ մեր նախարարների բաժան ոյժերը այսպէս կամ այսպէս, զոռով թէ խաթրով, միացնել կարողանային և մ ենք այսօր կունենայինք մի ազգ, նման ֆրանսիացիներին կամ գերմանականին թէ իւր թւով թէ հզօրութեամբ և գուցէ թէ, նոյն խոկ կուտուրայով: Եւ ընդհակառակը խլէք թուսաստանից նրա կալիտաներին, Գրօնիներին, Պետրոս Մեծին, Եկատերինա Բին, և Թուսաստանը այսօր կիմնէր մի Պարսկաստան, մի Թիւրքիայ, կամ մի այլ արևելեան աննշան ու թուլակազմ պետութիւն:

Իսրայէլ Օրին մի այդպիսի արտասովոր կամքի ու գործունէութեան տէր անձնաւորութիւն էր, որ մի առժամանակ փայլեց հայ դժույն հօրիզոնում ու սլացաւ, անցաւ, անցաւ համարեայ անհետ: Իսրայէլ Օրին իւր երկաթէ կամքով, իւր տոկուն ու յամառ զոր-

ծունէութեամբ, զուցէ, հայ պատմական ճակատագրի վրայ մի վճռական աղզեցութիւն ունենար, եթէ միայն փոխանակ տարիներով գեղերելու Եւրոպական այս ու այն երկիրը, մաշելու այս ու այն արքունիքների շեմքերը, Ֆրանսիայում զինուորական ուսումներացներուց յետոյ, ուղղակի իւր հայրենիքը վերադառնար և Ֆրանսիականի օրինակով կազմակերպելով հայ մելիքների գնդերը, զործի դիմէր, բայց նա այդ չարեց: Օտարների օգնութեամբ սեպհական անկախ հայրենիք կազմելու հիմնովը յաղթող հանդիսացաւ և Խորայէլ Օրին իւր բոլոր պատրաստութեամբ չկարողացաւ տալ հային այն, ինչ որ կարելի էր նրանից սպասել:

\* \* \*

Սրանով մենք վերջացրինք մեր ասելիքը Խորայէլ Օրիի մասին: Մեզ մնումէ մի երկու խօսք էլ ասել այն անցքերի մասին, որոնք ուղղակի կամ կողմակի կերպով կապւած են Խորայէլ Օրիի զործունէութեան հետ:

Խորայէլ Օրիի մահից յետոյ նրան փոխարինում է նրա օգնական Մինաս վարդապետ Տիգրանեանը, որ յետոյ Եսայի կաթուղիկոսի կողմից վար-

ձատրւեց արքեպիսկոպոսութեան աստիճանով, իւր, ազգին մատուցած ծառայութիւնների համար և կարգւեց առաջնորդ (անւանական) բոլոր Ռուսաստանի հայերի վրայ:

Մինաս վարդապետը երկար ժամանակ գործակցելով իսրայէլ Օրիի նետ, իւրացըրել էր նրա գործունէութեան արտաքին ձևերը, սակայն իբրև մի համեստ կրօնաւոր, իւր պատրաստութեամբ, ներքին արժանիքներով երկրորդ իսրայէլ Օրի լինել չէր կարող:

Մինաս վարդապետը, իսրայէլ Օրիի օրինակով, մի քանի փորձեր է անում Եւրոպայի արքունիքների նետ յարաբերութիւնների մէջ մտնել հայոց հարցի վերաբերմամբ, բայց ոչ մի յաջողութիւն չունենալով, ստիպւում է իւր յսրաբերութիւնները սահմանափակել Ռուսաստանով: Նա նստած Մոսկվայում, թագաւորի բնակովայրում, շարունակաբար պահպանում էր Հայոց մելիքների և հոգևորականութեան յարաբերութիւնը Ռուսաց արքունիքի հետ:

Դեռ իսրայէլ Օրին կենդան էր, երբ Պետրոս Մեծը ջարդելով Շեքներին Պօլտաւայի մօտ, մեծ համբաւ հանեց Եւրոպայում և բոլորովին վստահ իւր ոյժերի վրայ, սկսեց պատրաստութիւն-

ներ տեսնել իւր քաղաքական ընդարձակ ծրագիրը արևելքի վերաբերմամբ իրականացնելու և որովհետեւ արևելքում միակ ուժեղ պետութիւնը Թուրքիան էր, ուստի և սկսեց այդ տեղից:

Սակայն Պրուտ գետի մօտ կատարւած սոսկալի պարտութիւնը 1711 թ. ուր Պետրոս թագաւորը քիչ էր մնում գերի ընկնէր թուրքերի հրամանատար վաշայի ձեռքը, կարծէք ընդմիշտ վախեցըն նրան Օսմանների վերաբերմամբ, այնպէս որ նա էլ չվերսկսեց իւր արշաւանքները նրանց դէմ ոչ միշտ արևմուտքում Բալկանների կողմից, այլ և արևելքում Կովկասի կողմից, երբ այդ, թւում էր թէ, պետական ոչ միայն շահերի, այլ և պատիվ պահանջ էր դարձել:

Անհամեմատ աւելի յաջող էին գնում Պետրոս Մեծի գործերը Կասպից ծովի ափերում, ուր նա գործ ունէր արդէն քայքայւող, բոլորովին թուլացած, Պարսկական պետութեան հետ:

Իսրայէլ Օրիի մահից ուղիղ տասը տարի յետոյ, 1721 թ. օգոստոս 30-ին, Նիշտատի խաղաղութեամբ բոլորովին վերջ է արվում քսան տարի տևող Շեքների վական պատերազմին: Այժմ Պետրոս Մեծը (արդէն կայսր) հնարաւոր է զըտնում սկսել Պարսկական արշաւանքը:

Նա մօտ 100 հազար զօրքով անարգել անցնում է և տիրապետում Պարսկից Երկրներին, համնում է մինչև Դեբենտ և 1722 թւին օդուառու 23-ին տիրում է այդ նշանաւոր քաղաքին, որ բոլոր դարերի ընթացքում բովանդակ Կովկասի դուռն է համարել:

Պետրոս Մեծի բանակումն էր գլուխում և Մինաս վարդապետը:

Գանձասարի հայոց կաթուղիկոս Եսային և վրաց թագաւոր Վախթանգը մշտական յարաբերութեան մէջ էին Պետրոս Մեծի հետ և տեղեակ բոլոր անցքերին, անցուդարձին. ուստի նրանք, կաթուղիկոսն ու Վախթանգը, հայոց ու վրաց միացած զօրքով (40000) սպասում էին Գանձակ քաղաքի մօտ, որ եկող ոռւս զօրքի հետ մինան առաջ գնալու:

Կովկասեան քրիստոնէութիւնը հըրձանքի մէջ էր, բոլորը համարում էին որ հասել է արդէն փրկութեան ժամը և մահմետականութեան երկար դարերի ծանր լուծը ջախջախւել. Բայց մի բոլորովին պատճական իրողութիւն տակն ու վրայ արեց իրերի ընթացքը և խորտակեց քրիստոնեաների, գրէթէ կիսով չափ արդէն իրականացած յոյսը:

Աստրախանից նաւերով սպասում էին թէ 100 հազար զօրքերի պաշարե-

զէնը և թէ 30 հազար ձիերի կերը, բայց նաւերը փթած լինելով ճանապարհին խորտակւեցին և բանակում թէ հին խորտակւեցին և բանակում թէ զինուորները և թէ ձիերը մնացին առզինուորների: Միւս կողմից էլ անց պաշարեղէնի: Միւս կողմից էլ ամառայ անսովոր շաքերը չափազանց նեղացնում էին զինուորներին և մեծ կոտորած անում ձիերի մէջ. այնպէս որ Պետրոս Մեծը ստիպւած էր արշաւանքը գաղաքեցնել և հարկաւոր չափով բերդապահ զօրքեր թողնելով Դեբենտ, վերադառնում է Աստրախան և այնտեղից էլ շտապում Մօնկվա:

Պետրոս Մեծի հեռանալուց յետոյ հայ և վրացի միացած զօրքերը մնացին զարհուրելի յուսահատ դրութեան մէջ: Երջապատւոծ թշնամի մահմետական տարրերով ու պետութիւններով:

Քառասուն հազարը, որ մօտաւորապէս կազմում էր քրիստոնեայ զինուորներէս կաթուր, այնքան էլ մի փոքր ոյժ չէ, եթէ միայն թշնամին պարսիկը լինէր, բայց բանը հէնց այն է, որ նրանք Օսմաննեան հզօր ովետութեան հետ պիտի գործ ունենային, որ իրենց ժառանգ էր գործ ունենային, որ իրենց ժառանգ էր գործ սպասարկել կործանւող պարսից պետութեան անտէր մնացած երկրներին:

Օսմաննեան մի հզօր բանակ եկաւ և առանց այլնայլութեան տիրեց Վրաս-

տանին։ Վրաստանի գժբախդ թագաւոր Վախթանգը, որ մեր հայերի նման օտարների օգնութիւնով էր ուզում անկախ հայրենիք ստեղծել յաղթւելով Օսմանցիներից, ստիպւած եղաւ Ռուսաստան գաղթել։

Մոսկվայում եղած ժամանակ նա դառնապէս գանգաւուում ու նախատում էր ոռուսներին իրենց անազնիւ ու նենգաւոր քաղաքականութեան համար գէպի Կովկասեան քրիստոնէութիւնը\*）

Տիրելով Վրաստանին, Օսմանցիք երկու հակառակ կողմից, հիւսիսից և հարաւից իրենց ոյժերը ուղղեցին Հարաբաղի և Հափանի (Սիւնիք) վրայ։

Հայերը գեռ երկար տարիներ յոյսները չէին կտրում, որ մեծ քրիստոն-

\*) Ծանօթութիւն։ Վախթանգ VI վրաց տմբնալաւ, ամենազնիւ թագաւորներից մինն էր, որ հաւասարապէս սիրում էր և հայերին։ Նա մեռաւ Մոսկվայում և բերեց Աստրախան, թաղւեց ոռւսաց մայր եկեղեցում։ Այդպիսով Խորայէլ Օրին և թուղաւոր Վախթանգը, հայոց և վրաց ազատութեան երկու անգուգական գործիչները թաղւած են Աստրախանում։ մինը ոռւսաց մայր եկեղեցում, իսկ միւսը հայոց և Կատարինէ եկեղեցու բակում։ Աստրախանում, Հայոց Պօղոս-Պետրոս եկեղեցու բակում է թաղւած և Մինաս Վարդապետ Տիգրանեանցը։

եայ պետութիւն Ռուսաստանը, այնքան յուսադրական խօստումներից յետոյ, իրենց օգնութեան կ'համարի։ Բայց ի գուրք Հայերը եթէ իրենց հաշիւներն ունէին, իրեն հաշիւներն ունէր և Պետրոս Մեծը։ Հայերը երազում էին ոռւսաց ոյժով անկախ Հայաստան ստեղծել, իսկ Պետրոս Մեծը ցանկանում էր հայոց ոյժերով իր նոր տիրապետած Կասպիական երկրներում, վաճառականութիւնն ու արդիւնագործութիւնը ծաղկեցնել, գաղթեցնելով նրանց այդ երկրները, բայց հայերը չդաւաճանեն իրենց հայրենիքին, չմողեցին նրան։


Պըուտի ու Դերբենտի անյաջող փորձերը մի կողմից, հիւսիսային, շուրջ Բալտիկան նոր նւաճած լնդարձակ երկրների բարեկարգութեան հոգսերը միւս կողմից, ըստ երևոյթին, Պետրոս Մեծին ստիպել էին հրաժարուել իւրաքանչեան աշխարհակալական լնդարձակ ծրագրերից, բաւականանալ դիպլոմատիկական խաղաղ ճանապարհով ձեռք բերած Կասպիական երկրներով։ (Կասպից ծովի բոլոր արևմտեան և հարաւային ափերը) թէև միւս կողմից էլ դեռ չէր գաղաքում տեղական քրիստոնեաներին յուսադրելուց ապագայի վերաբերմամբ։

Սակայն ինչպէս ասացինք, հայերը

գեռ երկար յոյսները չէին կտրում  
որ Պետրոս Մեծը մի օր իրենց օգնու-  
թեան կհասնի: Գանձակի մօտից հե-  
ռանալով նրանք Ղարաբաղի սարերում  
հաստատեցին երկու մշտական բանակ  
— Սղնախ (ԸԵԿ), Մեծ Սղնախ, և  
փոքր Սղնախ. մի մեծ բանակ էլ կազմ-  
ւեց Ղափանում (Միւնիք): Հայոց երեք  
բանակները, որ ունէին իրենց աւելի  
մանը տեղական ճիւղաւորութիւնները,  
իրենց, թւով մօտ 30—50 հազար  
մարտիկներով, երկար ժամանակ դի-  
մազրում էին Օսմանեան կազմակերպ-  
ւած բանակներին, առաջինները իշխան  
Մելիք-Աւանի, Եսայի կաթողիկոսի, և  
այլ իշխանների առաջնորդութեամբ,  
իսկ երրորդը՝ քաջարի սպարապետ  
Մահմարին Տէր Աւետիք քահանայ—  
զօրապետի առաջնորդութեամբ:

Եւսայի յաջող գիմազրութիւնները  
շարունակում էին մինչև 1728 թիւը,  
երբ միաժամանակ մեռնում են Ղա-  
փանի լեռների առիւծ Թավիթ-Բէղը և  
Հայոց ազատութեան մեծ գործիչ և  
ղեկավար Գանձասարի Եսայի կաթու-  
ղիկոսը և այսուհետև Ղարաբաղի և  
Միւնիքի հայութիւնը թէև քաղաքա-  
կանապէս ստիպւած է լինում տեղի  
տալ ու ընկճւել բարբարոս իպամի

թւական անհամեմատ մեծութեան հան-  
գէպ, բայց շարունակում է իւր սըը-  
տում անշէջ պահել անվեհեր լեռնցու  
արիասիրտ ազատական հոգին ու եր-  
կրի կիսանակախ դրութիւնը, մինչև  
որ ուսւները ուղիղ մի դար յետոյ,  
վերջնականապէս խորաւակեցին իպամի  
դարեսը բռնութիւնը, հաստատելով  
նրա աւերակների վրայ մի նոր կեանք,  
որ բերում էր իւր հետ ապագայ ազա-  
տութեան, եղբայրութեան և հաւասա-  
րութեան մեծ գրաւականներ և որոնց  
իրական թագաւորութեանը անհամբեր  
սպասում ենք:



ՀՀ Ազգային գրադարան



NL0412613

Արմեն  
94/0

ԳԻՒՆ ՅՈ ԿԱՊ.

8177